ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գալստյան,

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի և Ազգային ժողովի աշխատակարգի 38-40-րդ կետերի համաձայն կից ներկայացնում եմ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու եվ 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու եվ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-ն օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-ն օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի (Կ-075-29.03.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ առաջարկներ և դրանց հիմնավորումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ԱՌԱՋԱՐԿ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու եվ 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու եվ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-ն օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-ն օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի (Կ-075-29.03.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ

Առաջարկում եմ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու եվ 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու եվ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-ն օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-ն օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի՝

1. 21-րդ հոդվածից հետո լրացնել նոր հոդված հետևյալ խմբագրությամբ.
   «Հոդված 22. Օրենսգրքի 78-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետեյալ խմբագրությամբ.
   5. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:»:

2. 32-րդ հոդվածով սահմանված Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Եթե սույն հոդվածի 2-15-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Ժամանակահատված	Եկամտային հարկի դրույքաչափը
2020 թվականի հունվարի 1-ից	22 տոկոս
2021 թվականի հունվարի 1-ից	21.33 տոկոս
2022 թվականի հունվարի 1-ից	20.66 տոկոս
2023 թվականի հունվարի 1-ից	20 տոկոս

».

3. 41-րդ հոդվածով սահմանված «24» բառը փոխարինել «34» բառով:

4. 42-րդ հոդվածով սահմանված Օրենսգրքի 56-րդ գլխի խմբագրության 267-րդ հոդվածի 3-րդ մասի «24» բառերը փոխարինել «34» բառերով:

5. 42-րդ հոդվածով սահմանված Օրենսգրքի 56-րդ գլխի խմբագրության 267-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) առևտրի իրականացման վայրերում, առևտրի կենտրոններում և տոնավաճառներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև անձնական օգտագործման ավտոմեքենաների առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ կամ էլեկտրոնային առևտրի շրջանակներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը.»:

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու եվ 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու եվ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-ն օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-ն օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի (Կ-075-29.03.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ առաջարկների

Առաջարկների ընդունումը պայմանավորված է երրորդ երկրներից ներմուծվող ապրանքների համար գանձվող ԱԱՀ վճարումը մինչև հաջորդ ամսվա 20-ը սահմանելու միջոցով ներմուծող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի շրջանառու միջոցների ավելացման, եկամտային հարկի դրույքաչափի 2020թ.-ից ևս 1 տոկոսային կետով իջեցման արդյունքում վարձու աշխատողների եկամուտների ավելացման, միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի սահմանների ընդլայնման անհրաժեշտությամբ: